



**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԳԵՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱԼ
ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ»¹ ԵՐԿՈՒՄ***

ՉՏԴ 342.1

DOI: 10.52063/25792652-2021.4-78

ՆԱՐԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
աստվածաբանության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mirzoyan.narineac@gmail.com*

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել պատերազմի ու գերության վերաբերյալ իրավակարգավորումներն ըստ Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկի:

Աշխատանքի խնդիրն է բնագրերի համադրմամբ վեր հանել խնդրո առարկա հարցերի սահմանումներն ըստ երեք խմբագրությունների և քննության առնել դրանց բովանդակային առանձնահատկությունները:

Ուսումնասիրության կարևորությունն ու անհրաժեշտությունը պայմանավորված են պատմաեկեղեցական իրողությունների բնութագրմամբ, պետաիրավական համակարգի զարգացմամբ: Հեղինակի՝ ազգային գիտակցության ու ազգապահպանման վերաբերյալ հայացքները, որոնք միտված են պետականության վերականգնմանը հասարակական միասնականության և իրավակարգավորման պայմաններում, կարևորվում են իրենց արդիական նշանակությամբ:

Աշխատանքը շարադրված է աղբյուրների և առկա ուսումնասիրությունների պատմաքննական վերլուծությունների կիրառմամբ:

Հետազոտությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ Մխիթար Գոշը քննարկվող թեմային հատկացում է առանձնահատուկ նշանակություն՝ կարևորելով պետահասարակական հարաբերությունների իրավակարգավորումները այնպիսի բացառիկ պայմաններում, ինչպիսիք են՝ պատերազմական իրադրությունը և հետևանքները: Օրենսգիրքը դրանց կարգավորման իրականացումը հնարավոր է համարում հանրային կյանքի հիմքում ազգային արժեքների իրավական ամրապնդմամբ:

Աշխատանքում զուգահեռաբար տրվում են քննարկվող թեման ներկայացնող բոլոր հոդվածների բնագրերը:

¹ «Գիրք դատաստանի» անվանաձևը բնագրային է: Իրավաբանական այս հուշարձանի բոլոր դարերի ձեռագրերում երկն անվանված է «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի», ինչպես օրինակ՝ «ի ձեռն գրոց դատաստանի», «զգիրս դրոշմեցաք դատաստանի», «յօժարեցաք գրել զդատաստանաց գիրքըս», «պատճառ գրոցս դատաստանի», «գիրս դատաստանի», «զգիր դատաստանիս», «ի գիրս դատաստանի» և «գրոցս դատաստանի»: Ուստի գրության բնագրային տարբերակը պահպանում ենք ամենուր: Հարկ է նշել նաև, որ հայագիտության մեջ առավել տարածված և կիրառելի տարբերակը «Դատաստանագիրք» անվանաձևն է:

* Հոդվածը ներկայացվել է 24.11.2021թ., գրախոսվել՝ 30.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հիմնաբառեր՝ պատերազմ, գերի, գերեվարում, պետություն, եկեղեցի, թագավոր, դատաստան, այլազգի, կին, տղամարդ:

Ներածություն

Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկասիրությունը, որպես հայ իրավամտքի եզակի հուշարձան, հանդես է գալիս բարձրարժեք իրավագիտական նշանակության և ստեղծման ժամանակաշրջանի պատմական կարևորության համատեղմամբ: Հասարակական կյանքի տարաբնույթ հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավանորմերի հաստատմամբ օրենսդիրը ձևակերպում ու հիմնավորում է իրավահաստատ դրույթների համապարփակ ամբողջություն, որոնք կոչված էին ծառայելու պետության սահմանադրական իրավունքի ապահովմանը:

Չաքարյան իշխանապետության օրոք ստեղծված իրավական հուշարձանը դառնում է ազգային ինքնության պահպանման ու պետականաշինության անկյունաքար: Չաքարյանների՝ պետականության վերականգման ջանքերը համաքայլ շարունակությունն էին այն գործընթացի, որի սկզբնավորման հեղինակը իրավական դաշտում նրանց խոստովանահայրն է՝ իրավագետ, մանկավարժ, առակագիր, քաղաքական, հասարակական, պետական ու եկեղեցական գործիչ Մխիթար Գոշը:

Ա)Պատերազմի և գերության հարցերը կարգավորող օրենքները՝ ըստ «Գիրք դատաստանի» երկի

«Գիրք դատաստանի» բազմատիրույթ ընդգրկում ունեցող իրավահաստատ երկն ամբողջանում է հասարակական ու պետական կյանքում առանձնահատուկ կարևորություն ներկայացնող մեկ այլ թեմատիկայի՝ պատերազմի ու գերության հարցերի իրավակարգավորմամբ: Խնդրո առարկա հարցերի սահմանումներն արտացոլված են երկի տասը հոդվածների շրջանակում: Իրավակարգավորումների միջև կան ներքին Եական տարբերություններ, որոնք վերաբերում են կյուլթի ոչ միայն ձևին, այլև բովանդակությանը, որովհետև միևնույն իրավահարաբերությունը տարբեր ձեռագրախմբերում այլաձև է կարգավորվում՝ պայմանավորված աշխատության Ա, Բ և Գ խմբագրություններով և ժամանակաշրջանների առանձնահատկություններով:

Աշխատանքի շարադրման համար հիմք ենք ընդունում Ա խմբագրությունը՝ որպես նախնական ու հեղինակային, մի հանգամանք, որ շատ կարևոր է քննարկվող թեմայի շուրջ հեղինակի իրական հայացքներն արտահայտելու համար: Հարկ է նշել, որ ուսումնասիրողները «Գիրք դատաստանի» երկի բովանդակային առանձին հարցերի անդրադառնալիս տարբեր ու հակասական տեսակետներ են առաջադրել՝ պայմանավորված տարբեր խմբագրությունների կիրառմամբ: Ուստի անհրաժեշտ ենք համարում տարբեր խմբագրությունների համադիր ներկայացումն ու վերլուծությունը՝ հիմք ընդունելով Գոշի հեղինակած օրինակը, այն է՝ Ա խմբագրությունը:

Ստորև տրված են պատերազմի ու գերության հարցերի իրավակարգավորումների բնագրերն ըստ Ա, Բ¹ և Գ խմբագրությունների: Քանի որ Գ խմբագրությունը կազմվել է ավելի ուշ՝ Ա խմբագրության հետևողությամբ, և ունի նույն հաջորդականությունն ու թեմաները, ապա աղյուսակով զուգարաբար ներկայացնենք Ա և Գ խմբագրությունները: Ա և Գ խմբագրություններն ունեն բովանդակային տարբերություններ, որոնք աղյուսակում ընդգծված են, իսկ եթե նույն միտքն այլ կերպ է արտահայտված, չենք ընդգծել:

¹ Ա և Բ խմբագրությունների գիտահամեմատական արդյունքները ի հայտ են բերում Ա և Բ խմբագրությունների միջև բովանդակային և տեքստային նույնություններ՝ միայն տարբեր հաջորդականությամբ և աննշան տեքստային տարբերություններով, որոնց հղման կարգով կանդրադառնանք Ա խմբագրության տեքստում:

Աղյուսակ

Դատերազմի և գերության հարցերի իրավապարզավորումների բնագրերն ըստ Ա և Գ խմբագրությունների

Ա խմբագրություն	Գ խմբագրություն
<p>ԳՆՈՒՄ Բ. ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱԻՐՈՒՑ ԴՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՑԱ¹</p> <p>Դատաստանաւ վարեցի յամենայն իրս եւ ի գործս հաւատացեալ թագաւոր: Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, մի՛ տացէ առնել սպանումն, բայց եթէ որ պատճառ պատերազմին իցէ յայլազգեացն: Եւ եթէ զքաղաք պաշարիցէ այլազգեաց, նախ ի խաղաղութիւն զնոսա կոչիցէ մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ եթէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ, զընդդիմացեալսն սպանեալ՝ զայլսն ընդ հարկիւ կայցէ. ապա թէ անձնատուրք լիցին, յայլսն հարկիցին, այլ մի՛ ի գլուխս: Եւ զծառատունկս ոչ հարկանել ի պաշարել քաղաքի՝ զպտղաբերս: Չքաղաքատուրս եւ զբերդատուրս, եթէ ճշմարիտ իցէ եւ յայլազգեաց, մատնիցէ մահու: Ապա եթէ բաւական իցէ փրկել զանձն, զկին եւ զմանկունս յարքունկիս կալեալ վաճառիցէ եւ տարագիր ի ժառանգութենէ արասցէ՝ խրատեալ յաչս: Ապա եթէ չարն ի գլուխ ելանիցէ, եւ ընդ ձեռամբ գայցէ, մի՛ ապրեցուցէ: Իսկ եթէ քրիստոնեայ եւ հանդերձեալ իցէ յայլազգիս մատնել եւ եթէ ի քրիստոնեայս, նոյն դատաստան մահու է: Բայց վասն մարդասիրութեան մեր աւրինացս խրատեցի յաչս, կամ ի ձեռս, կամ յայլս, զի ապաշխարութեան հասանիցէ եւ մի՛ կորիցէ, թէ ի գլուխ ելեալ իցէ չարն եւ թէ ոչ²:</p> <p>Բայց ասելի է զաւրինակ բաժանման գերոյն եւ աւարին³: Եթէ պատահի թագաւորի երթալ յաւար ամենայն զաւրաք, դրոշիւք եւ փողովք յաշխարհի շէնամեաց եւ աւար առեալ դարձցի, ոսկի</p>	<p>ԳՆՈՒՄ Բ. ՎԱՍՆ ԹԱԳԱԻՐՈՒՑ ԴՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՑԱ</p> <p>Դատաստանաւ վարեցի յամենայն իրս եւ ի գործս արքայն: Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, հրաման մի՛ տացէ այլ սպանութիւն առնել: Եւ եթէ պաշարեցէ զքաղաք այլազգեաց, նախ ի խաղաղութիւն կոչեցէ զնոսա մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ թէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ զքաղաքն, զայնոսիկ, որ ոչ կամէին զխաղաղութիւն, որով սպանանէ եւ զայլսն ընդ հարկիւ ածցէ, ապա թէ եւ նոքա հակառակին, սատակեցէ զնոսա, իսկ զգլխաւորսն ոչ եւս: Եւ ի պաշարել արքայի զքաղաքս ոչ է պարտ զծառս պտղաբերս կտրել: Չքաղաքատուրս եւ զբերդատուրս, եթէ յառաջ քան զչարն ի գլուխ հանելն յայտնեցին իրքն, մահու մատնեցին, իսկ եթէ զնով զնեսցէ զանձն իւր, փրկեցի, ապա զաչսն հանիցեն եւ զկինն եւ զորդիսն յարքունկիսն ծառայ առցեն եւ զինքն յայլ աշխարհի վարեցեն մերկ եւ անաչք: Ապա թէ զչարն ի գլուխ հանիցէ, եւ ընդ ձեռամբ ածցեն զնա, անողորմ սպանցի. այս դատաստանս այլազգոյ է, թէ հանդիպի: Իսկ եթէ քրիստոնեայ իցէ եւ մատնիցէ քաղաք կամ բերդ ի ձեռս անօրինաց կամ ի ձեռս քրիստոնէից, զնոյն արասցեն. զկին եւ զորդիսն եւ զստացուածս առցեն եւ զինքն յաչսն խրատեցեն եւ յայլ աշխարհի վարեցեն եւ մի՛ սպանցեն վասն մարդասիրին Քրիստոսի:</p> <p>Եթէ պատահի երթալ թագաւորի յաւար զօրօք եւ աւար առեալ դարձցի, ոսկի գտեալ՝ արքային լիցի: Բայց մի՛ երդմամբ առցէ, այլ</p>

¹ Ա և Գ խմբագրություններում Բ հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ Երկրորդ՝ աշխարհական օրենքների Ա հոդվածը. այն նույնությամբ ներկայացնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 306):

² Բ խմբագրության մեջ՝ *եւ մի՛ կորիցէ չարին յանդ ոչ եղելոյ* (**Բաստամեանց**, էջ 308):

³ Այս նախադասությունը Գ խմբագրության մեջ չկա:

գտեալ յաւարին՝ արքայի լիցի: Բայց մի՛ երդմամբ առցէ, այլ քարոզ լիցի, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միոյ եւթն տուծեսցի¹: Բայց տասանորդս յեկեղեցին տացէ:

Եւ գերոյն եւ աւարին կէսն արքայի լիցի, եւ տասանորդեսցէ յեկեղեցիս, եւ ի կիսոյն՝ զաւրացն: Իւրաքանչիւր իշխանք զնոյն բաժին արասցեն եւ լոքա եւս Նախ տասանորդեսցեն յեկեղեցիս իւրաքանչիւր: Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զաւրս, եւ իշխանք ինքեանց դրաւշիւք եւ փողովք իցեն, ոսկին Նմանապէս արքայի լիցի, եւ ի գերոյն եւ յաւարեն՝ տասանորդ արքայի, իսկ յեկեղեցիս՝ յիսներորդիցեն, որ է ըստ Աւրինացն: Փողս եւ դրաւշս պարտ է տալ իշխանի՝ ի վերայ գաւառի եւ բերդի լիցի:

Իսկ գողս թագաւորի եւ աւագակս ոչ վայել է, բայց միայն լրտեսս: Ապա թէ արտաքոյ իրաւանց էյցեն եւ առաքեսցեն, վասն հրամանին կէսն լոցա լիցի ի մարոյ եւ յանանոյ, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն, երկու բաժինն երթողին լիցի, զի կամաւք ի մահ դիմեցին: Չայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զաւրականին մեռանել՝ անպարտ է տերն: Իսկ գող առաքեալ եւ մեռեալ՝ պարտապան արեան է տերն, իսկ իւրովի երթողին՝ ոչ: Եւ զոր առաքեսցէ եւ ըմբռնեսցի, զնեսցէ, եւ զոր ոչն առաքեսցէ, ինքնին զնեսցէ զանձն:

Չաւրական ի պատերազմի զոք ըմբռնեալ՝ զգեստն եւ զէնքն ամենայն Նորա լիցին, այլ զրահն՝ տեառն լիցի:

Արծաթ յաւարին իշխանացն լիցի, պղինձ եւ երկաթ եւ Նման լոցա՝ զաւրացն: Դիպակ, կերպաս ամենայն աւրինակաւ թագաւորին լիցի, եւ ասրեղէն պատուական եւ կտաւ իշխանացն, եւ անարգ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զաւրացն: Իսկ զհարկս գաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն. մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւնս, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յՆստուծոյ կարգեցան ի փրկութիւն եւ ի պահպանութիւն

քարոզ կարդացէ ի ժողովն, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միոյ եւթն տուծեսցի: Բայց թագաւորն ի տասնէն զմինն կաթողիկոսին տացէ յամենայնէ: Գերոյն եւ աւարոյն կէսն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն եւ տասանորդս տացեն յեկեղեցին: Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զօրսն, այլ իշխանք միայն՝ զօրօք իւրեանց, Նոյնպէս ոսկին արքային լիցի, եւ գերին եւ աւարն՝ տասանորդս արքայի, իսկ յեկեղեցի՝ ի յիսնէն մինն ըստ Օրինացն: Փողս եւ դրօշս պարտ է տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի:

Գողս եւ աւագակս ոչ վայել է թագաւորի եւ իշխանի, բայց միայն լրտեսս, որ է **ջաշուշ**: Չօրք եւ իշխանք, եթէ հրամանաւ արքայի յաւար երթիցեն ըստ պատահման անկասկած, կէս աւարոյն եւ գերոյն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն՝ երկու բաժին երթողին լիցի, քանզի կամօք ի մահ դիմեցին: Չայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զօրականի մեռանել՝ անպարտ է տերն, որ առաքեսցն զնա: Իսկ եթէ արքայ առաքեսցէ, եւ մեռանիցի, պարտապան արեան Նորա Նա եղիցի, որ առաքեսցն զնա: Իսկ եթէ գողն հրամանաւ իւրով երթիցէ ի գողութիւն եւ մեռանի, արիւն Նորա ի գլուխ Նորա: Եւ զոր առաքեսցէ արքայ կամ իշխան ի գողութիւն, եւ ըմբռնեսցի, որ առաքեսցն զնա, Նա զնեսցէ, իսկ եթէ կամաւ իւրով երթիցէ առանց հրամանի, ինքն զինքն զնեսցէ:

Չօրական եթէ ի պատերազմի զոք ըմբռնեսցէ, զգեստն, եւ զէնքն, եւ երկվարն Նորա լիցի, իսկ զրահն՝ թագաւորին: Ոսկի, ակունք եւ կերպաս ամենայն կերպիւ, զորս առցեն յաւարի, թագաւորաց բաժին է, իսկ արծաթ եւ մարգարիտ՝ իշխանաց, Նոյն եւ ասրեղէն պատուական. իսկ անարգ ասրեղէն, եւ կտաւ, եւ պղինձ, եւ երկաթ եւ այլ այսպիսի, զօրացն լիցի: Իսկ զհարկս գաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն եւ մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւն, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ Աստուծոյ, զի

¹ Բ խմբագրութեան մեջ՝ տուծեսցի-ն դարձել է տուզանեսցի (Բաստամեանց, էջ 312):

<p>աշխարհի եւ ոչ ի կործանումն:</p> <p>Եւ արդ, այսպէս լիցի: Չանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ աւրինադրեաց յԵգիպտոս, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի նախ ինքեանց Էր ժառանգութիւն, եւ ոչ Էր հինգերորդ: Սոյնպէս եւ այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, եւ այգեստան, եւ բուրաստան մի՛ լիցի ընդ հարկաւ հնգեկին, նմանապէս ՝ ջրաղաց եւ տուն: Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի եւ կամ ընդ վաճառի հարկիցեն, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց, յորժամ բռնի ընդ հարկաւ արացեն:</p>	<p>յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն:</p> <p>Եւ արդ, այսպէս լիցի: Չանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս օրինադրեաց յԵգիպտոս, որ կոչի մինչեւ ցայսօր հնկակ, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի յառաջ ոչ էին հնկակ, այլ հայրենի կտուր, սակաւ եղեալ ունէին արծաթ համարով: Սոյնպէս եւ այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, եւ այգի, եւ դրախտ մի՛ լիցի ի նմանէ հնկակ, նմանապէս եւ՝ ջրաղաց, եւ տուն, եւ խանութ: Այլ թէ բնակիչքն արուեստաւորք են, իրաւամբ լիցի, որ ինչ պարտ իցէ, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց միայն այլազգեաց:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ Ը. ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈՑ¹</p> <p>Եթէ ի տանէ առն մատնիցի ի գերութիւն, յառնէն միայնոյ գնեցի, եւ թէ ի տանէ ծնողացն՝ յերկուցն, յորժամ ոչ ըստ կամաց առն անդ իցէ: Եւ այդ լիցի այդմ դատաստան: Բայց ժամանակն անսալոյ՝ կանոնացն լիցի. զի եթէ ոչ գտցէ միչչեւ գեթն ամն շրջեալ, կին առցէ կամաւք ծնողաց կնոջն գերելոյ, եւ զինչսն անդէն դարձուցէ զտուեալն ի բաժնի: Եւ առն գերելոյ նոյն լիցի՝ առնուլ այր կնոջն ըստ սահմանի ժամանակի:</p>	<p align="center">ԳԼՈՒԽ Ը. ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈՑ</p> <p>Եթէ ի տանէ առն գերի վարեցի կինն, այր իւր գնեցէ զնա: Եւ եթէ խռովեալ Էր կինն եւ ի տունս ծնողացն գնացեալ Էր եւ գերի վարեցի, այրն եւ ծնողքն գնեցեն: Նոյն լիցի եւ այրն, եթէ գերի վարեցի: Եւ երբ գերեցին, շրջելով խնդրեցեն եւթն ամ, եւ թէ ոչ գտցեն, որ ազատն մնաց՝ ամուսնացի հրամանաւ ծնողաց գերելոյն: Եթէ իրք մնացեալ կայ ի գերելոյն բաժնէ, անդրէն դարձուցեն ի ծնողսն գերելոյն:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ ԺԴ. ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՍ ՅԱՂԱԳՍ ԱՅԼՈՑ ԻՐԻՔ ԱՅՐՆ ՅԱՄԻՑԷ, ԵՒ ԿԻՆ ԱՅԼՈՒԽ ԼԻՑԻ²</p> <p>Ապա թէ եւ հաւաստի յաղագս մահուան բանն, միչչեւ յոթն ամ մի՛ առցէ այր, ըստ սահմանի գերելոյն: Իսկ եթէ նախ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան զստուգելն, եւ զայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ այնմ առն պսակ ոչ իցէ, եւ մանկուք իցեն:</p>	<p align="center">ԳԼՈՒԽ ԺԴ. ՎԱՍՆ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՍ ԱՅԼ ՃԱՆԱԴԱՐՉՈՐԻ ԻՑԷ ԱՅՐՆ ԵՒ ՅԱՍԵՆԱՑ, ԵՒ ԿԻՆ ԱՅԼ ԱՅՐ ԱՌՆՈՒ</p> <p>Յորժամ այր ոք զնայ ի ճանապարհ եւ յամիցէ, պարտ է կնոջ նորա համբերել: Ապա եթէ լսէ վասն մահու ստուգիւ, մի՛ առցէ այր միչչեւ յեթն ամն, ըստ սահմանի գերելոյն: Իսկ եթէ յառաջ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան զստուգելն մահու, եւ զայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ այնմ առն</p>

¹ Ա և Գ խմբագրություններում Ը հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ Է հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 102):

² Ա և Գ խմբագրություններում ԺԴ հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ ԺԳ հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 109):

<p>Ապա եթե ինքեան պսակ իցե եւ հաւանիցի աղաչողաց, կամք իւր են հնազանդիլ կամ ոչ:</p> <p>Ապա եթե զկնի սահմանին եւ ճշմարիտ կարծեալք սուտ մահուանն գայցե, մի՛ առցե զկին իւր, թէ ինքեան պսակ իցե եւ այնմ առն չիցե. ապա թէ այնմ առն իցե եւ իւր չիցե՝ առցե, թէ եւ մանկուկն իցեն: Իսկ եթէ այնմ չիցե եւ ոչ իւր, եւ յայնմանէ մանկուկն իցեն, մի՛ առցե, զի զկնի սահմանի դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսասցե, հարցեալ զկինն՝ զոր պտորժե՝ նմա լիցի, զի թերեւս այդպէս հակառակութիւնն լիցի լուծեալ: Եւ պատշաճ յաղագս երիտասարդութեանն տեսեալ ի նա յանգեցուցեն յերկուցն, եթէ անսան: 2այդ տեսաք յաղագս այդոցիկ իրաւացի դատաստան:</p>	<p>պսակ ոչ հասանի, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Ապա թէ այլ պսակ հասանի այս ճանապարհորդ այրկանս, իւր հրամանաւ լինի թողուլն եւ ոչ թողուլն: Ապա թէ յետ եւթն տարոյն եւ սուտ մահուանն գայցե յետոյ, մի՛ առցե զկինն իւր, թէ այլ պսակ հասանի իւր, եւ այրկանն, որ զկինն առեալ էր, ոչ հասանի պսակ. թողցի կինն այնմ, որ ոչ հասանի պսակ: Ապա թէ այնմ առն իցե պսակ եւ իւր չիցե, առցե զկինն իւր, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Իսկ եթէ այնմ ոչ իցե պսակ եւ ոչ իւր, մի՛ առցե, զի զկնի սահմանին դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսայցե, հարցանեն ընդ կինն, եւ կինն ում կամիցի՝ լինի:</p>
<p>ԳԼՈՒԽ ԾԺ. ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԳԵՐԵԼՈՅ ԿԱՆԱՆՑ ԱՅԼԱԶԳԵԱՑ¹</p> <p>Եթէ ելանիցեն ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց, եւ մատնեցե զնոսա ՏԵՐ Աստուած քո ի ձեռն քո, եւ աւարեցեն զաւար լոցա: Եւ տեսանիցեն յաւարին կին գեղեցիկ տեսլեամբ, եւ ցանկանայցեն նմա, եւ առցեն զնա քեզ կնութեան, եւ տարցիս զնա ի տուն քո, եւ գերծցեն զգլուխ լորա, եւ սրբեցեն զըղնգունս լորա, եւ հանցեն զհանդերձ գերութեան լորա, եւ նստցի ի տան քում եւ լացցե զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, եւ ապա մոցեն առ նա եւ բնակեցեն ընդ նմա, եւ եղիցի քո կին: Եւ եղիցի թէ ոչ հաճեցիս ընդ նմա՝ արձակեցեն զնա ազատ, եւ վաճառելով մի՛ վաճառեցեն զնա արծաթոյ, եւ մի՛ անարգեցեն զնա, քանզի լլկեցեր զնա:</p> <p>Եւ զայս ըստ Արիւնացն լրմամբ ընկալցին. թէ պատահի քրիստոնէի՝ նախ մկրտել եւ զարիւնակ հնութեանն բառնալ եւ ապա առնուլ կին ըստ կարգի ամուսնութեան: Եւ ոչ եթէ յորժամ հաճեցի ոչ, արձակե՛ ազատ, այլ եւ ոչ բնաւ արձակել, առանց բանի պոռնկութեան, իշխան է:</p>	<p>ԳԼՈՒԽ ԾԺ. ՎԱՍՆ ԳԵՐԵԼՈՅ ԿԱՆԱՆՑ ԱՅԼԱԶԳԵԱՑ</p> <p>Եթէ ելանիցեն ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց, եւ մատնեցե զնոսա ՏԵՐ Աստուած քո ի ձեռն քո, եւ աւարեցեն զաւար լոցա: Եւ տեսանիցեն յաւարին կին գեղեցիկ տեսլեամբ, եւ ցանկանայցեն նմա, առցեն զնա քեզ կին, եւ տարցեն զնա ի տուն քո, եւ գերծցեն զգլուխ լորա, եւ սրբեցեն զըղնգունս լորա, եւ հանցեն զհանդերձ գերութեան լորա, եւ նստցի ի տան քում եւ լացցե զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, եւ ապա մոցեն առ նա եւ բնակեցեն ընդ նմա, եւ եղիցի քեզ կին: Եւ եղիցի եթէ ոչ հաճեցիս ընդ նմա՝ արձակեցեն զնա ազատ, եւ վաճառելով մի՛ վաճառեցի ընդ արծաթոյ, եւ մի՛ անարգեցեն զնա, քանզի լլկեցեր զնա:</p> <p>Եւ զայս ըստ Օրինացն լրմամբ ընկալցին. թէ պատահի քրիստոնէի՝ նախ մկրտել եւ զօրինակ հնութեանն բառնալ եւ ապա առնուլ կին ըստ կարգի ամուսնութեան: Եւ ոչ եթէ յորժամ ոչ հաճեցի, արձակե՛ ազատ, այլ եւ ոչ բնաւ արձակել, առանց բանի պոռնկութեան, իշխան է:</p>

¹ Ա և Գ խմբագրություններում **ԾԺ** հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ **ԽԲ** հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեաց**, էջ 137):

<p>ԳԼՈՒԽ ԾԻԳ. ՅԱՐԱԳՍ ԴԱՏԱՍԱՆԱՑ ԱՌՈՂԱՑ ՆՈՐՈԳ ԿԱՆԱՅՑ ՉՄՏԱՆԵԼ Ի ՊԱՏԵՐԱԶՍ¹</p> <p>Եւ եթէ ամնուցու ոք նորոգ կին², մի՛ մտցէ ի պատերազմ, եւ մի՛ անկցին ի վերայ նորա եւ մի՛ ինչ իրք, այլ անպարտ լիցի, ի տան իւրում ուրախ արասցէ զկին իւր, զոր էառ:</p> <p>Մարդասեր Է Աստուած, կամի, զի մի՛ անկեալ ի պատերազմին՝ սուգ լիցի տարածամ, յաղագս որոյ անմեղադրելի են միանգամայն, կամ ամբարտաւանեալ՝ յանդգնի ճակատեալ եւ կամ երկբայի՞ զանգիտեալ: Չայս իրաւունս պահելի Է զաւրավարաց առ զաւրս:</p>	<p>ԳԼՈՒԽ ԾԻԳ. ՎԱՍՆ ՈՐ ԱՌՆՈՒ ՆՈՐ ԿԻՆ, ՉԷ ՊԱՐՏ Ի ՊԱՏԵՐԱԶՍ ԵՐԹԱԼ</p> <p>Եթէ ամնուցու ոք կին նորոգ, մի՛ մտցէ ի պատերազմ, եւ մի՛ անկցին ի վերայ նորա ինչ իրք, այլ անպարտ լիցի ի տան իւրում, եւ ուրախ արասցէ զկին իւր:</p> <p>Մարդասեր Է Աստուած, կամի, զի մի՛ անկեալ ի պատերազմին՝ սուգ լիցի տարածամ, յաղագս որոյ անմեղադրելի են միանգամայն, կամ ամբարտաւանեալ՝ յանդգնի ճակատեալ եւ կամ երկբայի՞ զանգիտեալ: Չայս իրաւունս պահելի զօրավարաց առ զօրս իւր ամենայն:</p>
<p>ԳԼՈՒԽ ԾՅԴ. ՅԱՐԱԳՍ ԴԱՏԱՍԱՆԱՑ Ի ՊԱՏԵՐԱԶՍԻ ՍՊԱՆՈՂԱՑ³</p> <p>Իսկ որ ի պատերազմունս մահք գործին, հարքն մեր ամենեւին չհամարեցան զայն ի մեղս. ըստ որում եւ մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոյս հետեւել: Բայց վասն զծեռս սրբելոյ բարիոք Է այնպիսեացն երեք ամ արտաքոյ հաղորդութեան լինել:</p> <p>Այս եւ ոչ ընդ աւրինաքն եմուտ: Եւ աստ լոկ ի հաղորդութենէ ասէ արտաքոյ: Յայսմանէ ուսցին դատաւորք, եւ մի վրեժ ինչ լիցի:</p>	<p>ԳԼՈՒԽ ԾՅԴ. ՎԱՍՆ Ի ՊԱՏԵՐԱԶՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱԼ</p> <p>Իսկ որ ի պատերազմունս մահք գործին, հարքն մեր ամենեւին չհամարեցան ինչ զայն ի մեղս, ըստ որում եւ մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոյս հետեւել: Բայց վասն զծեռս սրբելոյ բարիոք Է այնպիսեացն երեք ամ արտաքոյ հաղորդութեան լինել:</p> <p>Այս եւ ոչ ընդ օրինօքն եմուտ: Եւ աստ լոկ ի հաղորդութենէ ասէ արտաքոյ: Յայսմանէ ուսցին դատաւորք, եւ մի՛ վրեժ ինչ լիցի:</p>
<p>ԳԼՈՒԽ ՄԶ. ՅԱՐԱԳՍ ԴԱՏԱՍԱՆԱՑ ԳԵՐԵԼՈՑ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ⁴</p> <p>Յորժամ վասն մեղաց մերոց աշխարհս գերեցաւ, բազում արք եւ կանայք, որ ի գերութեան էին, եւ նոցա ամուսինքն՝ աստ, ամանց վարդապետաց հրամանի կանայս ամին, եւ արանց եղէն: Վասն այնպիսեացն</p>	<p>ԳԼՈՒԽ ՄԶ .ՎԱՍՆ ԳԵՐԵԼՈՑ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ</p> <p>Յորժամ վասն մեղաց մերոց աշխարհս գերեցաւ, բազում արք եւ կանայք, որ ի գերութեան էին, եւ նոցա ամուսինքն՝ աստ, ամանց վարդապետաց հրամանի կանայս ամին, եւ արանց եղէն: Վասն այնպիսեացն</p>

¹ Ա և Գ խմբագրություններում **ԾԻԳ** հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ **Ձ** հոդվածը, որը կրկնում է Ա խմբագրությունը՝ բառային տարբեր շարակարգությամբ (**Բաստամեանց**, էջ 392):

² Բ խմբագրության մեջ՝ *կին նորոգ* (**Բաստամեանց**, էջ 392):

³ Ա և Գ խմբագրություններում **ԾՅԴ** հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ **ՂԲ** հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 401):

⁴ Ա և Գ խմբագրություններում **ՄԶ** հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ **ԾԴ** հոդվածը, որը կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 209):

<p>սահմանեցաք այսպէս: Չի թէ յառաջ քան գելթն ամն ոք յանդգնեցաւ, մինչ գուգակիցքն ի գերութեան էին, եւ այլ առին, այնպիսեացն ի պոռնկութիւն համարեսցի, եւ գան եւ պատուհաս կրեսցեն, եւ յընչից եւ ի ստացուածոցն առնուլ եւ յաղքատս մատակարարել, եւ զատուցեն ի միմեանց, եւ ապաշխարեսցեն գելթն ամ: Եւ յետ ելթն ամին թէ դառնան ամուսինքն ի գերութենէ, անդրէն դարծցին առ իւրաքանչիւր ամուսինս առցէ, ապա թէ ոչ՝ յետ վերագրեալ ապաշխարութեանն կայցին զոր առինն: Եւ Նոքա, որք դառնանն յետ ելթն ամին, աւրինութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լիցին, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Իսկ որ համբերեացն ցելթն ամն, յետ ելթն ամին այլ առցէ՝ առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Նոյնպէս եւ որ յետ ելթն ամին դառնան ի գերութենէ, եթէ կամք իցեն՝ այլ կին առցեն, եւ այլ առն լիցին, եւ նոյնպէս կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի:</p> <p>Չայս իսկ առեալ Է վերջնոյ կանոնի գիրաման, զոր եւ մեք չափաւորապէս ըստ զանազանութեան եղաք եւ ի մերն, եւ զսոյն աստ յաւելաք, զի աստ ամենակատար իսկ Է այս դատաստան: Եւ թէ ինչ ի մերն հակառակ կարծեցի, այսոքիւք վարելով՝ անբամբաս մեք մնացուք, զի ինդիր մեր Է միայն ճշմարիտն ինել յեկեղեցիս¹ դատաստան:</p>	<p>սահմանեցաք այսպէս: Չի թէ յառաջ քան գելթն ամ ոք յանդգնեցաւ, մինչ գուգակիցքն ի գերութեան էին, եւ այլ առին, այնպիսեացն ի պոռնկութիւն համարեսցի, եւ գան եւ պատուհաս կրեսցեն, եւ յընչից եւ ի ստացուածոց առնուլ եւ աղքատաց տալ, եւ զատուցեն ի միմեանց, եւ ապաշխարեսցեն ելթն ամ: Եւ յետ ելթն ամին թէ դառնան ամուսինքն ի գերութենէ, իւրաքանչիւր ոք զիւր ամուսինն առցէ, ապա թէ ոչ՝ յետ ապաշխարութեանն կայցին զոր առինն: Եւ Նոքա, որք դառնանն յետ ելթն ամի, օրինութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լինին, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Իսկ որ հաբերեացն ցելթն ամն, յետ ելթն ամին այլ առցէ առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Նոյնպէս որ յետ ելթն ամին դառնան ի գերութենէ, եթէ կամք իցեն՝ այլ կին առցեն, եւ այլ առն լիցին, եւ նոյնպէս զկրկնոցացն ապաշխարեսցեն:</p> <p>Չայս իսկ առեալ Է զվերջնոյ կանոնի գիրաման, զոր եւ մեք չափաւորապէս ըստ զանազանութեան եղաք եւ ի մերն, եւ զսոյն աստ յաւելաք, զի աստ ամենակատար իսկ Է այս դատաստան: Եւ եթէ ինչ ի մերն հակառակ կարծեցի, այսոքիւք վարելով՝ անբամբաս մեք մնացուք, զի ինդիր մեր այն Է, զի ճշմարիտ լիցի յեկեղեցիս դատաստան:</p>
<p align="center">ՉԼՈՒԻՍ ՄԼ ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՆԱԲԱՐ²</p> <p>Իսկ ազատք զգինուորս ոչ իշխեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի:</p> <p>Նմանապէս զինուորք զշինականս ոչ կարեն աքսորել եւ ոչ խրատել, այլ աքսորել՝ ազատք, եւ խրատել՝ իշխանք:</p> <p>Չայդ ըստ այդմ կարգի իրաւացի գիտեմ</p>	<p align="center">ՉԼՈՒԻՍ ՄԼ ՎԱՆՆ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԹԱԳԱՒՈՐԱՑ</p> <p>Իսկ ազատք զգինուորս ոչ կարեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի:</p> <p>Նմանապէս և զինուորքն զշինականսն ոչ կարեն աքսորել եւ ոչ խրատել, այլ աքսորել՝ ազատք, եւ խրատել՝ իշխանք:</p>

¹ Բ խմբագրութեան մեք՝ *յեկեղեցի (Բաստամեանց, էջ 209)*:

² Ա և Գ խմբագրութիւններում **ՄԼ** հոդվածն Է, իսկ Բ խմբագրութեան մեք՝ **ՃԺԴ**, որը նույնութեամբ կրկնում Է Ա խմբագրութիւնը (*Բաստամեանց, էջ 420*):

<p>դատաստան ի տունն թագաւորաց:</p>	<p>Չայր ըստ այդմ կարգի իրաւացի գիտնմ դատաստան ի տունն թագաւորաց:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ ՄԼԳ. ՅԱՂԱԳՍ ՂԱՏԱՍՏԱՆԱՑ ԱԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ¹</p> <p>Իսկ ի պատերազմի սպանանելն՝ ի կամաւորէ եւ յակամայէ:</p> <p>Եւ եթէ ի գիշերի ոք կարծիցէ զթշնամի հարկանել եւ հարեալ զբարեկամ սպանցէ. եւ է սա ի կամաւորէ եւ յակամայէ:</p> <p>Եւ թէ նետ ոք ձգիցէ, եւ թշնամոյ պատահեալ՝ սպանցէ, է յակամայէ եւ ի կամաւորէ²:</p> <p>Այլ զդատաստանին տացուք զաւրինակ: Չի որպէս գրեցաւ ի դատաստանս թագաւորաց, զի թէպէտ ակամայ այլազգի զքրիստոնեայ սպանցէ, իբրու զի խնդայ, ըստ կամաւորի դատիցի ի գին արեան: Իսկ քրիստոնէի զքրիստոնեայ սպանեալ՝ կամաւոր:</p> <p>Եւ է կամաւորն, յորժամ վասն նախանձու կնոջ, եւ կամ յաղագս ընչից, եւ կամ փառաց վասն, կամ ըստ այլ պատճառի սպանցէ. Լիով, որպէս գրեալն է, դատեսցի: Եւ թէ զայլազգի սպանցէ, որպէս եւ անդ գրեցաւ՝ դատեսցի: Իսկ եթէ ակամայ, եւ թշնամի հանդիպի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբր զկամաւոր դատիցի կամ ըստ ներման՝ ընդ կիսոյ, որպէս ի դատաստանս գրեցաւ թագաւորաց:</p> <p>Իսկ եթէ բնաւին ակամայ իցէ, ըստ այնմ լիցի դատեալ, եւ թէ խառն ի կամաւորէ եւ յակամայէ, ըստ այնմ դատիցի:</p>	<p align="center">ԳԼՈՒԽ ՄԼԳ. ԿԱՍՆ ԱԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՍԱԲ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ</p> <p>Իսկ ի պատերազմի սպանանելն՝ ի կամաւորէ եւ յակամայէ: Եւ եթէ ոք ի գիշերի կարծիցէ զթշնամի հարկանել եւ հարեալ զբարեկամ սպանցէ. եւ է սա ի կամաւորէ եւ յակամայէ:</p> <p>Այլ զդատաստան տացուք զօրինակ: Չի որպէս գրեցաւ ի դատաստան թագաւորացն, զի թէպէտ ակամայ այլազգի զքրիստոնեայ սպանանէ իբրու զի խնդայ, ըստ կամաւորի դատեսցի ի գին արեան: Իսկ քրիստոնեայ զքրիստոնէ սպանեալ՝ կամաւոր է: Եւ է կամաւորն, յորժամ վասն նախանձու կնոջն, կամ յաղագս ընչից, կամ վասն փառաց, կամ վասն այլ պատճառի սպանցէ. որպէս եւ գրեալ է՝ լիով դատեսցի: Իսկ թէ ակամայ եւ թշնամի պատահի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբր զկամաւոր դատեսցի կամ ըստ ներման՝ ըստ կիսոյ, որպէս ի դատաստանս թագաւորացն գրեցաք:</p> <p>Իսկ թէ բնաւին ակամայ իցէ, ըստ այնմ լիցի դատաստան, եւ եթէ խառն ի կամաւորէ եւ յակամայէ, ըստ այնմ լիցի:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ ՄԾԱ. ՅԱՂԱԳՍ ՂԱՏԱՍՏԱՆԱՑ ՈՐՔ ՅԱԲԱՐԷ ԿԱՃԱՈԱՑ³</p> <p>Եւ վաճառեալ եւ գնեալ զաւար՝ ոչ</p>	<p align="center">ԳԼՈՒԽ ՄԾԱ. ԿԱՍՆ ՅԱԲԱՐԷ ԿԱՃԱՈԱՑ</p> <p>Վաճառեալ եւ գնեալ զաւար՝ ոչ դարձցի</p>

¹ Ա Ա Գ խմբագրութիւններում **ՄԼԳ** հոդվածն է, իսկ Բ խմբագրութեան մեջ՝ **ՃԺԷ**, որը կրկնում է Ա խմբագրութիւնը (**Բաստամեանց**, էջ 424):

² Այս նախադասութիւնը Գ խմբագրութեան մեջ չկա:

³ Ա Ա Գ խմբագրութիւններում **ՄԾԱ** հոդվածն է, իսկ Բ խմբագրութեան մեջ՝ **ՃԼ**, որը կրկնում է Ա խմբագրութիւնը (**Բաստամեանց**, էջ 442):

<p>դարձցի անդրեն իբր զգողացեալն, զի այդ արհիւսաւոր գործ թագաւորաց եւ իշխանաց է, ուստի եւ կանոնք յընծայս ընդունի պատարագի, իսկ զգողացեալն եւ զյաւիշտակեալն՝ ոչ եւս:</p>	<p>անդրեն իբրեւ զգողացեալն, զի այդ օրինաւոր գործ թագաւորաց է եւ իշխանաց, ուստի եւ կանոնք յնծայս ընդունի պատարագի, իսկ զգողացեալն եւ զյաւիշտակեալն՝ ոչ եւս:</p>
--	--

Բ) Պատերազմի ու գերութեան իրավակարգավորումների բովանդակային քննությունն ու առանձնահատկությունները

Առկա բնագրերի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող օրենքների գլխավոր աղբյուրներն են Աստվածաշունչը և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Աստվածաշնչից պարբերաբար մեջբերումներ անելը պատահականություն չէր. անհրաժեշտ էր օրենքի ուժ տալ օրենսգրքին և ապահովել նրա ընդգրկուն գործադրությունը պետական, եկեղեցական ու հասարակական բոլոր ոլորտներում:

Մխիթար Գոշն օրենքները սահմանելիս հիմնականում կիրառում է «դատաստան» բառը, և հոդվածների վերնագրերն արտահայտվում են «Յաղագս դատաստանաց...» սկսվածքներով:

Հեղինակը մեծ տեղ է հատկացնում դատաստանին, քանի որ կարծում է, որ երկրի վրա դատաստանի բացակայությունը կարող է բերել ներքին խռովությունների և վերացնել խաղաղությունը (**Բաստամեանց**, էջ 20):

«Գիրք դատաստանի» երկի տասը հոդվածները ընդգրկում են պատերազմի, խաղաղության, գերության, զինվորների, ավարի, հայրենավաճառության, մահապատժի թեմատիկայով իրավակարգավորումներ, որոնք արտացոլում են քննարկվող ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր պատմական իրողությունները և ցույց են տալիս Գոշի իրավահայեցողական մտորումները: Ի հայտ են գալիս հեղինակի՝ որպես հզոր օրենսդրի առանձնահատուկ հայացքները պետականաշինական, պետական մտածողության, ազգային ինքնության վերաբերյալ և ամենից գլխավորը՝ պետականության վերականգման ձգտումները: Պատերազմի և գերության թեման բոլոր առնչակից հարցերով ամփոփված է Գոշի պետաիրավական հայեցակարգն արտացոլող հետևյալ գլխավոր հոդվածում **Գլուխ Բ. Յաղագս թագաւորաց դատաստանի եւ որք ընդ ձեռամբ նոցա (Թորոսյան, էջ 28)**: Այս իրավակարգավորումն առանցքային նշանակություն ունի քննարկվող թեմայի ուսումնասիրման համար: Հեղինակը նշում է, որ հավատացյալ թագավորը պետք է ամեն հարց դատաստանով կարգավորի: Հարկ է նշել, որ նա դատավոր էր համարում միայն Աստծուն. «Չի դատաստան առնել Աստուծոյ գործ է, զի նա է ճշմարիտ դատաւոր եւ այլ դատաւորք նման նմա կոչին» (**Բաստամեանց**, էջ 26):

Դատավորաց շրջանի «բացումն» Աստվածաշնչում ներկայացված է որպես Աստծո նախախնամության գործողություն, երբ Տերը դատավորներ ուղարկեց. «**Եւ յարոյց նոցա Տեր դատաւորս, եւ փրկեաց զնոսա Տեր ի ձեռաց ւաւարառուսաց**» (Դատ. Բ 16): Իշխանության կառուցվածքի աստվածաշնչյան սկզբունքի կարևորագույն առանձնահատկությունը դատական իշխանության առանձնացումն է, որից էլ կախված է նրա անկախությունը (**Պապայան, էջ 424-498, Պետրոսյան, էջ 25-60**):

Մխիթար Գոշը կարևորում էր թագավորի քրիստոնյա լինելը և օրենքների հարցում առաջարկում էր քրիստոնեական սկզբունքներով մարդասիրական մոտեցում ցուցաբերել: Գ խմբագրության մեջ **հավատացյալ թագավոր** արտահայտությունը փոխարինել է **արքա** բառով (**Թորոսյան, էջ 302**), քանի որ այն ուշ շրջանի խմբագրություն է և կենտրոնացած է աշխարհիկ օրենքների վրա:

Հեղինակը նշում է, որ եթե հարկադրաբար պատերազմ է սկսվել այլազգիների դեմ, և եթե այն ավարտվել է, չպետք է շարունակել սպանող, միայն այն պարագայում, եթե այլազգիները շարունակեն պատերազմը: Եթե այլազգիների քաղաք է

պաշարվում, նախապես պետք է խաղաղության կոչ (Բ օրին. Ի 10) անել, իսկ եթե նրանք անձնատուր լինեն, պետք է հարկ վճարեն: Գոշը մահապատիժ է սահմանում նրանց համար, ովքեր հայրենյաց քաղաքի կամ բերդի տեղը նախապես թշնամուն կտեղեկացնեն: Եթե մատնիչները կարողանան փրկել իրենց անձը, ապա նրանց ունեցվածքը, երեխաներին ու կնոջը պետք է հանձնել արքունիքին, ապա այքերը հանելով՝ տարագրեն այլ աշխարհ: Իսկ եթե չար մտորումներն ի հայտ գան, պետք է մատնիչներին մահվան արժանացնել, եթե այլազգի են: Քրիստոնյա մատնիչներին նույնպես պետք է նույն դատաստանին արժանացնել, բայց մարդասիրական տեսանկյունից արժան է, որ կուրացնեն կամ էլ ձեռքը կամ մարմնի այլ մասերը հատեն, որպեսզի ապաշխարի:

Մխիթար Գոշի՝ մահապատիժի կամ մարմնազեղման ծանր վճիռների վերաբերյալ տեսակետները քննադատության են արժանացել՝ հիմնվելով Գոշի՝ եկեղեցական ու քրիստոնյա լինելու հանգամանքի վրա: Հեղինակը նշում է, որ այդ ամենն անհրաժեշտ են երկրի փրկության ու պահպանման համար և ոչ կործանման. «*զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յԱստուծոյ կարգեցան ի փրկուպիւնս եւ ի պահպանութիւնս աշխարհի եւ ոչ ի կործանումնս*» (Թորոսյան, էջ 31):

Քննարկվող իրավակարգավորմամբ հեղինակն անդրադառնում է գերիների ու ավարի հարցին: Ըստ օրենքի՝ եթե թագավորն իր զորքի հետ թշնամիների պետությունն ներխուժի ավարման նպատակով և ավարի հետ նաև ոսկի գտնի, կեսը նրանը լինի, իսկ մյուս կեսը՝ զորքինը, իսկ արքան տասանորդը պետք է եկեղեցուն տա, նույն կարգը պետք է կատարվի նաև իշխանների դեպքում. եթե արքան չգնա, և իշխանները զորքով գնան ավարի, ոսկին նմանապես արքային տրվի, նույնպես գերիների ու ավարի տասանորդը, իսկ հիսուներորդը եկեղեցուն տրվի, ինչպես Օրենքում է նշվում (Թիւք ԼԱ 30):

Փաստորեն վերոբերյալ իրավանորմով կարգավորվում են նաև զորականների իրավունքները: Թագավորին ու իշխանին վայել չէ ավարառուներ (ըստ Գոշի՝ գող) ունենալ. միայն լրտես-հետախույզներ: Եթե զորականը պատերազմի ժամանակ գերի է վերցնում, ապա գեւքն ու զգեստն իրեն են պատկանում, իսկ գրահը՝ արքային: Ավարի ժամանակ վերցրած արծաթը իշխաններին է, իսկ պղինձն ու երկաթը՝ զորքինը:

Գրավված գավառներից ու ազգերից արդարությամբ հարկ պետք է վերցնեն արքաներն ու իշխանները, որովհետև նրանք Աստուծոց են հաշիվ տալու և կարգվել են նրանից աշխարհի պահպանման, փրկության և ոչ կործանման համար:

Նշված իրավակարգավորումները ցույց են տալիս Մխիթար Գոշի պետականաշինական, պետականության վերականգնման ձգտումները, ինչին նա ցանկանում էր հասնել արդար, հավասար, բոլոր դասակարգերի իրավահարաբերությունների հաստատմամբ: Հոդվածի վերջում հեղինակը նշում է, որ իրեն կարող են ծաղրել դատարկ ու երևութական թագավորության մասին խոսելու համար, բայց իր օրենքները վերականգնվող և մոտալուտ պետականության համար են:

Այսպիսով՝ Մխիթար Գոշի բուն նպատակը պետականության վերականգնումն էր և ձգտումը՝ սատարել երկրի միասնությունը պահպանող ուժերին և Հայոց եկեղեցուն՝ դրանով իսկ նպաստելով ազգային ինքնապահպանմանն ու ինքնագիտակցության արթնացմանը: Եկեղեցին միավորում էր ամբողջ հայ ժողովրդին ոչ միայն մեկ կրոնի, այլև մեկ գաղափարի՝ մեկ միասնական ազգի, պետության շուրջ: Նրա նպատակն էր հետապնդել ազգային-պետական շահեր. Գոշի հոդվածներն արտացոլում են այդ գաղափարները և ցույց տալիս օրենսգետի վերաբերմունքը ազգային-պետական հարցերի վերաբերյալ. «*Ճարդ ամենայն աւրինակաւ զաւրենս իրաւանցս արասցեն, որք ընթերցման տորա պատահին, նմանս զմեզ տեսանելով այնոցիկ, որք յանուրջս երեւութական թագաւորութիւնս եւ բազում ինչ ախորժելիս, եւ զարթուցեալ դատարկս եւ ունայնս յամենայն իցեն: Բայց գիտասցեն, զի ոչ անգիտանամ, եթէ ամենայն թագաւորութիւն երկրաւոր անցաւոր եւ*

փոփոխելի է, այլ առաել մերս եղել արքայութիւն, զի անցեալն ոչ է ի միջի, եւ ի ներկայս չիք, եւ ապագային ոչ պատահիմ, բայց զփափագս ձեւանալով լնում եւ զյարմարութիւն առաջարկութեանս ամբողջ պահել փոլթան» (**Թորոսյան**, էջ 33):

Պատերազմ գնալու, պատերազմի ժամանակ սպանելու և ապա ապաշխարելու, թագավորի, զինվորների ու իշխանների հարաբերությունների և նրանց արքայության, պատերազմի ժամանակ կամքով և առանց կամքի սպանություն և բերված ավարի վաճառմանն են վերաբերում հետևյալ հոդվածները՝ **Գյուլի ԾԻԳ. Յաղագս դատաստանաց առողաց նորոգ կանայս չմտանել ի պատերազմ, Գյուլի ԾԳԴ. Յաղագս դատաստանաց ի պատերազմի սպանողաց, Գյուլի ՄԼ. Յաղագս դատաստանաց արքորելոյ թագավորի եւ որք ընդ նաւաւ, Գյուլի ՄԼԳ. Յաղագս դատաստանաց ակամայ եւ կամայ սպանութեանց, Գյուլի ՄԾԱ. Յաղագս դատաստանաց որք յաւարէ վաճառաց** (**Թորոսյան**, համապատ.՝ 84, 103, 141, 143, 154):

Վերոբերյալ իրավանորմերում հեղինակը կարևորում է, որ նորաթուխ ամուսնության պարագայում այրը չպետք է գնա պատերազմի, որպեսզի տանն իր կնոջ հետ երջանիկ լինի, քանի որ Աստված մարդասեր է (Բ օրին., ԻԴ 5) և չի ցանկանում նորաստեղծ ընտանիքում սուգ, իսկ զորավարները պետք է այդ կարգը պահեն: Հեղինակն անդրադառնում է նաև պատերազմից հետո երեք տարի հաղորդություն չստանալով մաքրվելու հարցին և նշում, որ թեև Եկեղեցու հայրերը պատերազմում սպանությունը մեղք չեն համարել, բայց արժե սրբվել: Այս մասին խոսել է նաև Սբ. Բարսեղ Կեսարացին իր կանոններում, որոնք ներառված են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում (**Հակոբյան**, հտ.Ա, էջ 341): Այս հարցերին զուգահեռ՝ Գոշը կարգավորել է նաև եկեղեցականների, թագավորի, իշխանների, շինականների և ուրիշների արքայություն օրենքները, որոնք չեն կատարում իրենց պարտականություններն ըստ արժանվույն, ինչպես ինքն է ասում, քանի որ նրանք կարգված են Աստծու կողմից ազգի փրկության և պահպանման համար: Ովքեր նշանակել են նրանց, միայն նրանք իրավունք ունեն արքայություն կամ խրատելու: Օրենսգետը տալիս է վերից վար՝ թագավորից մինչև շինական արքայություն և խրատելու իրավակարգավորումները, որոնք անհրաժեշտ են երկրում խաղաղություն հաստատելու և կենտրոնաձիգ պետություն ունենալու համար՝ բոլորին մշտապես պահելով իրավահավասարության դիրքերում: Թագավորը կարգվել է Բարձրալի և մարդկանց կողմից, և նրանք էլ կարող են նրան արքայություն, իսկ նրա որդիներից իրավունք չկա գահ վերցնելու: Բայց երկրում խաղաղություն հաստատելու համար հարկ է, որ նա խրատվի այլ թագավորի կամ հայրապետի կողմից (**Թորոսյան**, 142), իշխանները նույնպես կարող են իշխանությունից գրկվել, բայց ոչ իրենց որդիները, իսկ նրանց արքայություն կամ խրատելու իրավունքը թագավորինն է (**Թորոսյան**, 141): Ազատները զինվորներին իրավունք չունեն խրատելու և արքայություն, այլ միայն՝ իշխանները, զինվորներն էլ շինականներին իրավունք չունեն արքայություն և խրատելու, սակայն նրանց կարող են արքայություն ազատները և խրատել իշխանները (**Թորոսյան**, 142):

ՄԼԳ հոդվածում կամքով և ակամա սպանությունների մասին խոսելիս Մխիթար Գոշը ներկայացնում է նաև իրավակարգավորումներ պատերազմի ժամանակ ակամա և հատուկ սպանությունների վերաբերյալ: Եթե մեկը պատերազմի ժամանակ զիջերը սպանում է իր ազգակցին՝ կարծելով, թե թշնամի է, դա ակամա և կամավոր սպանություն է (**Հակոբյան**, հտ. Բ, Կանոնք Բասդի ԴԵ, էջ 124), իսկ եթե թշնամուն է նետով սպանում, նույնպես կամավոր և ակամա է: Ավարի վերաբերյալ հեղինակի օրենքներն ամբողջաբանում են վաճառված և գնված ավարի կարգավորումներով: Գնված ավարը գողացված չէ, արքայի ու իշխանների կողմից է բաշխվում, այն համարվում է պատարագի ընծա, մինչդեռ հափշտակվածը չի ընդունվում:

Մխիթար Գոշը հիմնականում ամուսնաընտանեկան դիտանկյունից է կարգավորում գերության թեմատիկան: Երկում չորս հոդված նվիրված է ամուսնաընտանեկան իրավանորմերի նշյալ հարցերի կարգավորմանը՝ **Գյուլի Ը.**

Յաղագս դատաստանաց առն եւ կնոջ գերելոց, Գլուխ ԺԴ. Յաղագս դատաստանաց եթէ վաճառականութեամբ եւ կամ յաղագս այլոյ իրիք այրն յամիցէ, եւ կինն այլում լիցի, Գլուխ ԾԺ. Յաղագս դատաստանաց գերելոյ կանանց այլազգեաց, Գլուխ Մ2. Յաղագս դատաստանաց գերելոց արանց եւ կանանց (Թորոսյան, համապ.՝ 39, 41, 79, 118):

Առաջին հոդվածում հեղինակը կարծես հատվածական մտքեր է արտահայտում և սկզբում հստակ չի նշում կնոջ մասին, բայց հաջորդիվ հայտնի է դառնում, որ սկզբում կնոջ գերելարման կարգավորումն է տրվում, ապա նրա ամուսնու: Սույն իրավակարգավորումը քաղված է կանոններից (իմա՝ Կանոնագիրք Յայոց, Դվինի ժողովի է): Այստեղից կարելի է եզրակացնել, որ հեղինակը հատվածական է խոսում, որովհետև այդ կանոնը մենք արդեն գիտենք: Գ խմբագրությունը, որն ավելի ուշ շրջանի խմբագրություն է, մանրամասնում է և հստակեցնում հոդվածը: Գոչն այդ մասին առավել հանգամանալից խոսում է Մ2 կանոնում, որում սկզբում բերում է կանոնը, հետո նշում, որ իր հավելումն է կատարում և իրեն չմեղադրեն, որովհետև սահմանում է՝ ըստ եկեղեցական ճշմարիտ դատաստանի: Ըստ իիշյալ օրենքի՝ եթե կինը գերելարվել է ամուսնու տևից, ապա ամուսինը պետք է ետ գնի նրան, իսկ եթե ծնողների տևից է գերելարվել, ապա ամուսինն ու ծնողները կարող են նրան ետ գնել: Եթե մինչև յոթ տարի կինը չվերադարձվի, ապա ամուսինը կարող է գերյալ կնոջ ծնողների համաձայնությամբ ամուսնանալ, իսկ կնոջ բաժինը վերադարձնի ծնողներին:

Զննարկվող թեմայի մասին հեղինակը խոսում է նաև ԺԴ և Մ2 հոդվածներում: ԺԴ հոդվածը ներկայացնում է ամուսնու՝ որպես վաճառական և այլ հանգամանքներում ճանապարհորդելու հանգամանքները, և զուգահեռ անդրադարձ է կատարվում գերության պատճառով անհետանալու պարագաներին: Մ2 օրենքն անդրադառնում է այն սովորույթներին, որ Գոչի ժամանակ սովորական էր դարձել, տղամարդու կամ կնոջ գերության պարագայում, առանց վարդապետի թույլտվության, ամուսնանում էին և չէին սպասում յոթ տարի, իսկ երկիրը գերության մեջ էր: Նրանք պետք է յոթ տարի զոջային, ապաշխարեին, աղքատներին մատակարարեին, ապա սպասեին իրենց ամուսիններին: Եթե մահվան լուրը ճշգրտվում էր, ապա կարող էին յոթ տարի անց ամուսնանալ:

Մխիթար Գոչը խոսել է նաև պատերազմի ժամանակ այլազգիների կանանց գերելարելու մասին. եթե այլազգի կինը հաճելի է, և ցանկություն կա նրան բերելու, ապա հնարավոր է բերել, փոխել հագուստը, ընդունել նրան որպես կին, նրա հետ միություն կազմել և քրիստոնյայի նման դաստիարակել: Եթե որոշ ժամանակ անց ամուսինն այլևս չի ցանկանում այդ կնոջ հետ ապրել, կարող է նրան վերադարձնել, բայց մարդասիրական մոտեցում ցուցաբերել և չվաճառել:

Մխիթար Գոչը յուրաքանչյուր պարագայում կարևորում է ամուսնաընտանեկան հարցերի կարգավորումը՝ ընտանիքը համարելով ազգային ինքնության, ազգապահպանման հիմնասյուն, և պատահական չէ, որ Եկեղեցին մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել այս իրավակարգավորումները: Բացի այդ, «Գիրք դատաստանի» իրավաբանական այս հուշարձանը ստեղծվել է նաև հասարակական պահանջով, և յուրաքանչյուր հարցի կարգավորման պարագայում հաշվի են առնվում նաև քաղաքացու իրավունքները: Հասարակ քաղաքացու և կենցաղային հարցերի կարգավորումը մշտապես եղել են Գոչի ուշադրության կիզակետում:

Սբ. Պսակը Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդներից է, և ամուսնության հետ կապված հարցերը սահմանել է Եկեղեցին այն հիմունքով, որ ընտանիքը Զրիստոսի և իր Եկեղեցու միության օրինակով նվիրվում է Աստծո արքայության առաջադիմության համար աշխատելուն և նրա բաղկացուցիչ ընտանիքը կազմելուն (**Տեր-Միքելեան, 2007, Մելիք-Թանգեան, էջ 801-826**):

Մխիթար Գոչի ժամանակ ամուսնաընտանեկան իրավանորմերը ղեկավարվել են Յայոց Եկեղեցու կողմից: Եկեղեցական իրավունքն առանց ամուսնաընտանեկան

իրավանորմերի անհնար է պատկերացնել: Քանի որ ընտանիքն Աստծո ընտանիքն է¹ Երկրի վրա, ապա Եկեղեցին չի կարող այքաթող անել ամուսնաընտանեկան հարցերը: Այս գաղափարը հիմնավորապես թափանցեց հայոց կանոնական իրավունքի և աշխարհիկ օրենսդրության մեջ:

Միով բանիվ՝ միջևադարյան հայ իրավագիտակցության համաձայն՝ ամուսնությունը համարվել է աստվածային հաստատություն²: Ուստի Հայոց Եկեղեցին մշտապես կարգավորել է ամուսնաընտանեկան հարցեր և առանձին Նորմեր սահմանել (**Հովհաննիսյան**, 122-146, **Դյոճեան**, էջ 195-204): Ամուսնաընտանեկան իրավունքը գալիս է լրացնելու Մխիթար Գոշի՝ պատերազմի, գերության և առնչակից հարցերի վերաբերյալ օրենսդրական համակարգը:

Եզրակացություն

«Գիրք դատաստանի» երկում արտացոլված օրենսդրական հատվածը, որը վերաբերում է պատերազմին ու գերությանը, ժամանակի հրամայական պահանջով էր, գիտակցված անիրաժեշտություն: Հեղինակը շրջահայացորեն համապատասխանեցրել է դրանք իր ժամանակաշրջանի ազգային-հասարակական հրամայականներին:

Պատերազմի ու գերության թեմատիկան Գոշը շարադրել էր ըստ Աստվածաշնչի և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ հավելելով նաև իր մոտեցումները: Նա այդ իրավակարգավորումները համադրել է առկա իրողությունների հետ, ապա օրինագրել:

¹ Ընտանիքի գաղափարը սկսում է հենց արարչագործությունից, երբ Աստված ստեղծեց մարդուն՝ արու և էգ, և նրանց պատվիրեց աճել և բազմանալ՝ օրհնելով նրանց միությունը. 'Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ, Աճեցեք եւ բազմացարուք եւ լցեք գերկիր...' (Ծննդ. Ա 27-28): Ապա Աստված Ադամի կողից արարեց կնոջը, որպեսզի նրանք մեկ մարմին լինեն միմեկին կյանքի վերջ, և ամուսնացնեց նրանց միությունը՝ ամրագրելով, որ ամուսնությունը երկու անձանց միաձուլումն է որպես անբաժանելի մարմին. '...եւ առ մի ի կողից նորա (իմա՝ Ադամ-Ն. Մ.) եւ ելից ընդ այնր մարմին. եւ շինեաց Տեր Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին, ու ած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ, Այս այժմիկ ոսկր յոսկերացնիմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի Կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկուքն ի մարմին մի: Եւ էին երկրքեան մերկ, Ադամ եւ կին իւր եւ ոչ ամաչէին' (Ծննդ. Բ 21-25): Այսպիսով՝ ընտանիքի գաղափարը արտացոլված է դեռևս Աստվածաշնչում և կազմում է մարդու ստեղծման պատմության կորիզը: Աստծու օրհնությունը ոչ այլ ինչ էր, քան պսակադրության արարողություն: Աստուծու օրհնությունը ոչ այլ ինչ էր, քան պսակադրության արարողություն: Այս առումով բավական հատկանշական են Խրիմյան Հայրիկի խոսքերը. 'Այսպես աւարտեցաւ Դրախտին հարսանիքը, որոյ պսակադիր Քահանայն Աստուած էր, Եկեղեցին Դրախտն էր, իսպ էւ Աւետարան Կենաց ծառն էր' (տե՛ս **Խրիմյան Հայրիկ**, Երկեր, Երևան, 1992, էջ 188): Այսպես մարդու արարումը հանդիսացավ ընտանիքի ստեղծման հիմքը, որն իր շարունակական արտահայտությունը գտավ որդեծնության մեջ. (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Պապայան Ռ.**, Նշվ. աշխատ., էջ 147-175, նաև՝ **Աբրահամյան Ս.**, Աստվածաշունչը որպես ընտանեկան իրավունքի սկզբնաղբյուր, Երևան, 2013, էջ 8-20):

² Զրիստոնեական հիմնական հասկացություններն արտահայտված են ընտանեկան իրավունքի բնութագրերով՝ Հայր, Որդի, եղբայրներ, քույրեր, տուն, Փեսա, Սեր և այլն: Զրիստոնեական խորհրդաբանության անքակտելի մաս է հանդիսանում Մոր ու Մանկան պատկերը: Ասվածի այլաբանական արտացոլումը 'Երգ երգոց' գրքում է. այն ամբողջովին նվիրված է Սիրո, Սիրահարի ու Սիրեցյալի, Փեսու ու Հարսի միացմանը: Ամբողջ նպատակը Աստծուն միանալն է: Այս գաղափարը կարելի է հանդիպել Եկեղեցու այնպիսի հայրերի մոտ, ինչպիսիք են՝ Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Նարեկացին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ (տե՛ս Երգ երգոց, հանդերձ մեկնությունք նախնեաց, աշխատ.՝ **Տ. Մետրոպ քահանայ Արամեանի**, Երևան, 1993, **Բերդումեան Պ.**, Մեկնութիւն Երգ երգոցի, 'Գանձասար', 1992, թիվ 2, էջ 222-252):

Սույն թեման արտացոլում է հիմնականում պետական, եկեղեցական, հասարակական կարևորագույն հարցերը: Մխիթար Գոշն ամրապնդում էր հայ իշխողների դասակարգային դիրքերը երկրի ներսում, բայց և մեծապես սատարում ընդհանուր համազգային շահերին, հայ ժողովրդի ինքնապահպանման ու քաղաքական ինքնորոշման գործին:

Մխիթար Գոշի իրավակարգավորումները զգալիորեն նպաստեցին այն նպատակների իրագործմանը, որոնց համար ստեղծվել էին. դրանք ունեին համազգային նշանակություն, ստեղծվել էին ազգային ինքնության պահպանման միջոցով հայոց պետականության վերականգնման համար:

Օգտագործված գրականություն

1. *Աստուածաշունչ մատենա Յին եւ Նոր Կտակարանաց*. Երեւան, 1997:
2. *Երգ երգոց, հանդերձ մեկնութեամբ նախնեաց*. աշխատ.՝ Տ. Մեսրոպ քահանայ Արամեանի. Երևան, 1993:
3. *Կանոնագիրք Յայոց*. աշխատ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Ա. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964:
4. *Կանոնագիրք հայոց*. աշխատ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Բ. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:
5. Մխիթար Գոշ. *Գիրք Դատաստանի*. աշխատ.՝ Խ. Թորոսյանի. Երևան, 1975:
6. *Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Յայոց*. իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. Վարդապետի Բաստամեանցի. Վաղարշապատ, Ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1880:
7. Պապայան, Ռաֆայել. *Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները*. Էջմիածին, 2002:
8. Պետրոսյան, Ռաֆիկ. *Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները*. Երևան, 2008:
9. Տեր-Միքելյան, Արշակ. *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը*. Ս. Էջմիածին, 2007:
10. Մելիք-Թանգեան, Ներսես. *Յայոց եկեղեցական իրաւունքը*. Գիրք Ա (վերահրատ.), Ս. Էջմիածին, 2011:
11. Հովհաննիսյան, Սուրեն. «Սասնա ծռերը»՝ *հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան*. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1968, թիվ 3 (6), էջ 96-109:
12. Հովհաննիսյան, Սուրեն. *Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.)*. Երևան, 1976:
13. Բերդուևեան, Պետրոս. *Մեկնութիւն Երգ երգոցի*. «Գանձասար», թիվ 2, Երևան, 1992, էջ 222-252:
14. Ղլտճեան, Արսէն. *Յայոց հին իրաւունք, ընտանեկան, իրաւունք*. Ալեքսանդրապոլ, Գ. Ս. Սանոյեանց, 1913:
15. Խրիմյան, Հայրիկ. *Երկեր*. Երևան, 1992:

Works Cited

1. *Astvatsashunch matyan hin yev nor ktakaranac* [Old and New Tastements]. Yerevan, 1997.
2. *Yerg yergoc handerdz meknutyamb nakhnyac, ashkhatarirutyamb Mesrop qahana Aramyani* [Song of songs compiled by Mesrop priest Aramyani with the interpretation of ancestors]. Yerevan, 1993.
3. *Kanonagirk' Hayoc*, ashkhatarirutyamb V. Hakobyani [Armenian Canon book compiled by Vazgen Hakobyan]. hator A, Yerevan, 1964.

4. *Kanonagirk' Hayoc*, ashkhatasirutyamb V. Hakobyani [Armenian Canon book compiled by Vazgen Hakobyan]. hator B, Yerevan, 1971.
5. Mkhitar Gosh. *Girk' datastani*, ashkhatasirutyamb Khosrov Torosyani. [The Lawcode compiled by Khosrov Torosyan]. Yerevan, 1975.
6. *Mkhitara Goshi Datastanagirk' Hayoc*, iravabanakan hetazotutyunk' handerdz tsanotutyambk' Vahan Ts. Vardapeti Bastamyanci, Vagharshapat, i tparani Srbo Katoghike Ejmiatsni [The Lawcode of Mkhitar Gosh compiled by Vahan Vardapet Bastamyanc with juridical studies and notes, St. Katoghike, Ejmiatsin] 1880.
7. Papyan, Rafaael. *Ardi iravunk'i qristoneakan akunqnere* [Christian roots of modern law]. Etchmiadzin, 2002.
8. Petrosyan, Rafik. *Iravunk'i ev orenk'i, datarani ev artaradatutyany astvatsashnchyan himunknere* [Biblical Basics of Right and Law, Judgment and Justice]. Yerevan, 2008.
9. Ter-Mik'elyan, Arshak. *Hayastanyayc Surb Yekeghecu qristonyakane* [Catechism of the Armenian Holy Church]. S. Echmiadzin, 2007.
10. Melik'-Tangyan, Nerses. *Hay yekeghejakan iravunk'e* [The Law of the Armenian Church], A (reprinted.), S. Echmiadzin, 2011.
11. Hovhannisyan, Suren. "*Sasna Tsere*" hay entanekan iravunk'i patmutyan karevor hushardzan, "*Banber Yerevani Hamalsarani*" ["Crazies of Sasoun" as a Main Possible Monument in Armenian Marriage Law], Yerevan, 1968, № 3 (6), p. 96-109.
12. Hovhannisyan, Suren. *Amusna-entanekan iravunk'e vagh avatakan Hayastanum (IV-IX dd.)* [Marriage-family Laws in Early Feudal Armenia (IV-IX centuries.)], Yerevan, 1976.
13. Berdumyan, Petros. *Meknutyun Yerg yergoci* [Exegesis of "Song of Songs"], "Gandzasar", № 2, Yerevan, 1992, p. 222-252.
14. Ghltchyan, Arsen. *Hayoc hin iravunk', entanekan iravunk'* [Armenian Old Law, Family Law]. *Aleksandrapol*, 1913.
15. Khrimyan, Hayrik. *Yerker* [Works]. Yerevan, 1992.

WAR AND CAPTIVITY THEMES IN THE «LAWCODE» BY MKHITAR GOSH

NARINE MIRZOYAN

*Yerevan State University, Chair of Theology,
Ph.D. in Historical Sciences, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this study is to present the laws about war and captivity in the "Lawcode" by Mkhitar Gosh.

The task of the work is to present the original texts of the subject in three editions by comparing them and then to analyze their meanings.

The importance and relevance of the study are the characteristics of the church-historical realities, and the development of the state-judicial structure. The author's views on nation consciousness and protection, in order to rebuild the statehood by the way of public unity and law codes, are important and actual.

The article is written based on historical-research analysis of the sources and studies.

The conclusion of the article is that Mkhitar Gosh emphasized war and captivity themes and wrote the laws for topic issues. He told about the war and it's results and wanted people to prevent their nation values in public life.

The study includes all the original texts of the themes.

Keywords: *War, warprisoner, captivity, state, Church, king, judgement, foreigner, wife, husband.*

ТЕМАТИКА ВОЙНЫ И ПЛЕНЕНИЯ В «СУДЕБНИКЕ» МХИТАРА ГОША

НАРИНЭ МИРЗОЯН

*доцент кафедры богословия
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель данного исследования – представить правовые положения войны и пленения в соответствии с «Судебником» Мхитара Гоша. Задача работы заключается в том, чтобы путем сопоставления оригинальных текстов по трем редакциям выявить определения и границы рассматриваемых вопросов и изучить их содержательные особенности.

Значимость и необходимость подобного исследования обусловлена данной в произведении характеристикой историко-церковных реалий и развития государственно-правовой системы. Взгляды автора на национальное самосознание и проблему сохранения нации, как залога восстановления государственности при условии общественного единства и правопорядка, продолжают оставаться значимыми и актуальными.

Работа изложена с применением различных источников и аналитических исторических трудов.

Исследование позволяет прийти к выводу, что Мхитар Гош придает исследуемой теме особое значение, подчеркивая важность правопорядка в функционировании общества в таких исключительных условиях, как военное положение и его последствия. Автор считает возможным осуществление правопорядка в условиях, когда основу общественных отношений составляют национальные ценности.

В исследовании приводятся обзор работ, посвященных данной теме.

Ключевые слова: *война, плен, пленение, государство, церковь, король, суд, чужестранец, жена, муж.*